



Նախագահի գրասենյակ

2020 թվականի ապրիլի 6

Բարի երկուշաբթի LACC ընտանիք.

Հուսով եմ, որ բոլորդ խաղաղ հանգստյան օրեր եք ունեցել: Գիտեմ, որ ձեզնից շատերը հանգստյան օրերն էլ են անցկացնում նախապատրաստվելու ձեր դասերին և առաջադրանքներին: Դա, իհարկե, նոր պարադիզմ է: Ինչքան էլ որ ժամանակավոր լինի այս իրավիճակը, այն որոշ ժամանակ խոր ազդեցություն կունենա մեզ վրա:

Ես խոստացա, որ այսօր ձեզ շատ տեղեկություններ կուղարկեմ, ահա և դրանք:

Այս հաղորդագրության վերջում կցված կարող եք գտնել Լոս Անջելես համայնքի առողջապահության վարչության կողմից նոր ցուցումներ՝ կապված այն բանի մասին, թե ինչ է նշանակում սերտ կապ ունենալ COVID -ի հետ:

Խնդրում ենք այն ուսանողները, ովքեր դեռ խնդիրներ ունեն իրենց Canvas-ին միանալու կամ իրենց դասընթացները առցանց տեսնելու մեջ, հաղորդագրություն ուղարկեն hotline-students@lacitycollege.edu էլեկտրոնային հասցեին: Այս էլ. փոստը հսկվում է երկուշաբթիից ուրբաթ, և դա լավագույն միջոցն է մեր աշխատակիցներից աջակցություն ստանալու համար: Մենք հնարավորինս ամեն ինչ կանենք, որպեսզի արագ լուծենք որևէ խնդիր ունենալու դեպքում: Եթե Ձեզ անհրաժեշտ է որևէ բան, խնդրում ենք մեզ տեղեկացնել:

Մենք ուսանողների համար ունենք օգնության մի քանի տարբերակներ՝

- Հիմնադրամը դրամաշնորհներ է տալիս լրիվ դրույքով ուսանողներին: Ուսանողները կարող են դիմել մինչև \$500 դրամաշնորհի: Ահա դիմումի լինքը՝ <http://www.laccfoundation.org/website/wp-content/uploads/2020/04/LACC-Foundation-Emergency-Student-Stipend-Fund-Fillable-2.pdf>
- \$ 50 նվեր քարտ մթերքի համար Kroger-ի կողմից (Food for Less), որը կարող եք գտնել ուսանողական պորտալում:

Նաև ցանկացած ուսանողական վարկ կասեցված է վճարման համար: Վարկատուներն այլևս չեն կարող իրենց հաշիվներից վճարումներ անել: Ոչ մի տոկոս չի ավելանալու: Դա կլինի մինչև 2020 թվականի սեպտեմբերի 30-ը: Եվ, վերջապես, եթե դուք կորցրել եք ձեր աշխատանքը, ապա պետք է դիմեք գործազրկության նպաստի:

Ակադեմիական գործերի բաժնի կողմից

Ամառային դասերի դասացուցակը կհրապարակվի երկուշաբթի օրը, 2020 թվականի ապրիլի 20-ին: Ամառային դասերի գրանցումը սկսվում է երկուշաբթի օրը, 2020 թվականի մայիսի 4-ին: Այն ուսանողները, ովքեր դադարեցնեն իրենց դասերը ներկայիցս սկսած մինչև 2020 թվականի ապրիլի 22-ը ավտոմատ կերպով կստանան EW (): Այն ուսանողները, ովքեր կդադարեցնեն դասերը 2020 թվականի ապրիլի 22-ից հետո, ստիպված կլինեն դիմում լրացնել EW-ի համար:

Ուսանողական Ծառայություններ բաժնի կողմից

Life Skills- ը ուսանողների հետ թերապիաններ է անցկացնում հեռատեսության միջոցով: Խնդրում ենք կապվել Ջոու Էկնոլսկու հետ EXNEWSJJ@lacitycollege.edu էլ.փոստի միջոցով: Ինչպես նաև, Ուեսլիի կլինիկան, որը գտնվում է քոլեջի դիմացի փողոցի վրա բաց է ուսանողների համար: Մենք նաև մտավոր առողջության վրա հիմնված ֆորում կազմակերպելու գործընթացի մեջ ենք, որպեսզի ուսանողները կարողանան հարցեր տալ և ուղղություններ ստանալ, որի վերաբերյալ ավելի մանրամասն տեղեկություն կստանաք ավելի ուշ:

Աղմինիստրատիվ ծառայություններ բաժնի կողմից

Քոլեջի շենքերը մաքրվել և ախտահանվել են: Հաստատությունների պատասխանատու անձնակազմը աշխատել է նաև բացօթյա տարածքներում: Նրանք այս շաբաթ շատ զբաղված կլինեն անձրևի հետ կապված խնդիրներով, քանի որ անձրևներ են տեղալու ամբողջ շաբաթվա ընթացքում: Գրախանութը, ընդունման բաժինը և փոստատունը բաց են: Եթե ձեզ ինչ-որ բան է հարկավոր, խնդրում ենք, դիմեք մեզ:

Հերթական հանդիպումների վերսկսում են:

Ես մտածում եմ փոխել իմ Town Hall հանդիպումների օրերն ու ժամանակները: Քոլեջի կառավարման մեր մշտական անձնաժողովները վերսկսվելու են, ուստի ես աշխատում եմ գտնել նոր ժամանակ Town Hall ժողովների համար: Ես կտեղեկացնեմ, արդյոք դրանք շուտով կփոխվում են թե ոչ:

Ֆյուու! Սա շատ ինֆորմացիա էր: Հուսով եմ, որ դուք կունենաք հիանալի 2-րդ ուսանողական շաբաթ: ՀԻՇԵՔ. Հաջորդ երկուշաբթի, ապրիլի 13-ը, դասավանդման օր չէ: Այսպիսով, դասախոսներն ու ուսանողները հաճելի երկար հանգստյան օրեր կունենան: Եվ այս ուրբաթ օրը կեսօրյա արձակուրդ է աշխատակազմի համար: Այսպիսով, այս շաբաթվա ընթացքում մեր աշխատակիցները մի փոքր կթեթևանա:

ՀԱՎԱՏԱՆՎԱՃԻՐ ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԻՐ Ահա թե ինչպես ենք դա անում!

Լավ և ապահով եղեք՝

Մերի

Խնդրում ենք մուտք գործել lacitycollege.edu կայք՝ այս հաղորդագրությունը հայերեն,
կորեերեն, ռուսերեն կամ իսպաներեն լեզուներով կարդալու համար: